

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Մ Ա Ն

«___» _____ 2018 թ.

N___-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 400 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Մ Ա Ն է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի «Հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» N 400 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում և որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետում «30-րդ» բառը փոխարինել «30.1-ին» բառով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 2-րդ կետի «դ» ենթակետից հանել «, ինչպես նաև 1.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի և նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ տվյալները (N 6 ձև)» բառերը,

գ. 2-րդ կետի «ե» ենթակետում «3.0 մլն դրամ» բառերը փոխարինել «10 000 000 ՀՀ դրամ» բառերով,

դ. 2-րդ կետի «զ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը» ենթակետ.

«ը) հաշվետու տարվա ընթացքում աշխատողի՝ աշխատանքի ընդունումն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած և

(կամ) գրանցման հայտ չներկայացրած հարկ վճարողների (առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի) վերաբերյալ տվյալները (N 9.1 ձև):»,

գ. 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «հարկային մարմնի» բառերով,

է. 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրությամբ» բառով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը» բառերը՝ «հարկային մարմինը» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝

ա. NN 5 և 7 ձևերում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. NN 6 և 8 ձևերն ուժը կորցրած ճանաչել,

գ. N 7 ձևում «3.0 ՄԼՆ ԴՐԱՄ» բառերը փոխարինել «10 000 000 ՀՀ ԴՐԱՄ» բառերով,

դ. N 9 ձևից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ N 9.1 ձև.

«Ձև N 9.1

Ց Ա Ն Կ

**20____ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂԻ՝
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԳՐԱՆՑԱԾ ԵՎ (ԿԱՄ)
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ)**

Հ/Հ	ՀՎՀՀ-ն	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը
1	2	3	4

»,

Ե. N 10 ձևում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ